Վրաստանի բազմակուսակցական համակարգը. առանձնահատկություններ, մարտահրավերներ և հեռանկարներ

ԼԻԱ ՏԵՏՐԱԶԵ
Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարան, Վրաստան

ԳԻՈՐԳԻ ՄԵԼԻՔԻԶԵ
Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարան, Վրաստան

Հոդվածում քննարկվում է բազմակուսակցական համակարգի ձևավորման և կայացման գործընթացը Վրաստանում, որը, ինչպես հետխորհրդային այլ երկրներում, սկիզբ է առել ժողովրդավարացման նախնական փուլում, երբ խորհրդային կառավարման համակարգի ճգնաժամի շրջանում ստեղծվեց քաղաքական գործունեություն ծավալելու հնարավորություն: Թեև Վրաստանում գրանցված է մոտ երկու հարյուր երեսուն կուսակցություն, սակայն այդ թիվն ինքնին չի փաստում երկրում բազմակուսակցական համակարգի առկայությունը: Խորհրդարանում տեղ զբաղեցրած կուսակցությունները, որպես կանոն, հաղթում են ձայների զգալի մեծամասնությամբ, ինչը բացառում է այլ կուսակցությունների հետ համագործակցության անհրաժեշտությունը: Վրաստանի կուսակցական համակարգը բնորոշվում է իշխող կուսակցության գերակայությամբ, որը հնարավորություն չունի ներկայացնել հանրային շահերը: Կուսակցությունները նաև ի վիճակի չեն ձևակերպել և համակարգել հանրային շահերը: Չնայած կայունության արտաքին տպավորությանը՝ կուսակցական համակարգը չունի ներկայացուցչականություն և մրցունակություն: Չնայած 2016թ. նախընտրական միջավայրը ստեղծեց բազմակուսակցական խորհրդարանի և կոալիցիոն կառավարության ձևավորման ակնկալիքներ, ներկայումս բազմակուսակցական համակարգի փոխարեն նշմարվում է երկկուսակցական համակարգի ուրվագիծ: Ավելին, եթե մոտ ապագայում խորհրդարանից դուրս մնացած կուսակցութ-յունները չստեղծեն միասնական ընդդիմադիր քաղաքական կենտրոն, ապա, ամենայն հավանականությամբ, կձևավորվի երկկուսակցական համակարգ:

Բանալի բառեր
Կուսակցական համակարգ, ընտրություններ, կուսակցություն, քաղաքական վարչակարգ, հետխորհրդային տրանսֆորմացիա

Վրաստանում նոր քաղաքական խճանկարի ձևավորումը սկսվեց 1980-ականների վերջին, երբ խորհրդային կառավարման համակարգի ճգնաժամի շրջանում ստեղծվեց քաղաքական գործունե-ություն ծավալելու հնարավորություն: Վրաստանում, ինչպես մի շարք

այլ երկրներում, կուսակցությունները սկսեցին ձևավորվել ժողովրդավարացման նախնական փուլում:

Առաջին բազմակուսակցական ընտրությունները Վրաստանում անցկացվեցին 1990թ. հոկտեմբերի 28-ին: Ընտրություններին մասնակցեցին երեսունչորս քաղաքական կազմակերպություններ և ընտրական դաշինքներ: 1992թ. ընտրություններին մասնակցող կուսակցությունների թիվը հասավ քառասունմեկի, 1995թ.՝ իննսունհինգի: Հետագայում էլ այն շարունակում էր աճել՝ ընտրություններից ընտրություններ:

Ներկայումս Վրաստանում գրանցված կուսակցությունների թիվը մոտ երկու հարյուր երեսուն է[1], որոնցից շուրջ քսանը ակտիվ կուսակցություններ են: Մի շարք կուսակցությունների անվանումներ հայտնի են միայն դրանց գրանցողներին՝ Արդարադատության նախարարության աշխատակազմին: Գրանցված կուսակցությունների թվով Վրաստանը բացառություն չէ: Այդ թիվն ավելի մեծ է որոշ երկրներում, որոնք ունեն հին և կայացած ժողովրդավարություն: Միաժամանակ, Վրաստանում գրանցված կուսակցությունների թիվն ինքնին չի փաստում բազմակուսակցական համակարգի առկայությունը: Կայացած բազմակուսակցական համակարգերում հանրային աջակցությունը բաշխվում է մի քանի կուսակցությունների միջև այնպես, որ նույնիսկ ընտրություններում հաղթած կուսակցությունը, կառավարություն ձևավորելիս, ստեղծում է կոալիցիա այլ կուսակցությունների հետ: Մինչդեռ, Վրաստանի խորհրդարանում տեղ զբաղեցրած կուսակցությունները, որպես կանոն, հաղթում են ձայների զգալի մեծամասնությամբ, ինչը բացառում է այլ կուսակցությունների հետ համագործակցության անհրաժեշտությունը:

1990-ական թվականներից սկսած Վրաստանի քաղաքական համակարգին մշտապես բնորոշ է եղել խորհրդարանում մեծ ներկայություն ունեցող իշխող կուսակցություն և պառակտված ընդդիմություն: Հետևաբար, Վրաստանի կուսակցական համակարգը կարելի է պայմանականորեն որակել որպես գերիշխող կուսակցությամբ բազմակուսակցական համակարգ:

Կառավարման նախագահական մոդելն ուղղակիորեն ազդել է կուսակցական համակարգի զարգացման վրա: Ուժեղ նախագահական

[1] https://napr.gov.ge/p/477 (21.10.2016).

իշխանությունը հակադրվում է «հաշվետու» կուսակցական համակարգին[2]: Հավակնոտ նախագահը՝ որպես քաղաքական գործիչ, փորձում է ամբողջ իշխանությունը ենթարկեցնել նախագահի անձին՝ այդպիսով ձևավորելով «կուսակցական առաջնորդի» քաղաքական կերպար[3]: 1991թ. ապրիլին Վրաստանը դարձավ նախագահական հանրապետություն: 1995թ. Սահմանադրությունը արտացոլում էր Շևարդնաձեի՝ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նկրտումները: Վրաստանը զարգացավ ամերիկյան՝ հզոր նախագահական հանրապետության, ոճով, քանզի 1990-ական թվականներին կիսանախագահական հանրապետությունը չէր դիտարկվում որպես կառավարման համապատասխան ձև: 2004թ. փետրվարի 6-ի սահմանադրական փոփոխությունների հիման վրա նախագահ Սահակաշվիլին էլ ավելի ուժեղացրեց նախագահական կառավարումը[4]: Հզոր նախագահական կառավարման փորձից զատ, «Վրաստանն ուներ նաև մեսիայի հետ կապված խնդիր»[5]: Վերջինս նշանակում է, որ ընտրողներն ունեն հատուկ (չափազանց մեծ) վստահություն նախագահի թեկնածուի նկատմամբ: Ուժեղ նախագահական կառավարման պայմաններում ընտրված նախագահի կուսակցությունը գտնվում է գերակա դիրքում, մինչդեռ ընդդիմադիր կուսակցությունները պառակտված են և թույլ[6]:

Միակուսակցական նախագահական համակարգերում նոր դերակատարներին չի տրվում ընտրողներին մոբիլիզացնելու հնարա-

---

[2] **Linz J. J.,** Presidential or Parliamentary Democracy: Does it Make a Difference?, 1994, *Kitschelt. H., Post-Communist Systems: Competition, Representation and Inter-Party Cooperation*, Cambridge University Press, 1999, p. 56.

[3] **Ames B.,** The Reverse Coattails Effect: Local Party Organization in the 1989 Brazilian Presidential Election, *The American Political Science Review*, 1994, 88 (01), 95-111, http://www.jstor.org/stable/2944884?seq=1#page_scan_tab_contents, (15.12.2014).

[4] **Matsaberidze M.,** Search for the Georgian Model of Democracy, *Jones S. F., The Making of Modern Georgia, 1918-2012: The First Georgian Republic and Its Successors*, NY, Routledge, 2014, p. 156.

[5] **De Waal T.,** Georgia's Political Shake up: Enter the Oligarch*, Georgian Journal Research*. 2011, 101 – 113, http://www.georgianjournal.ge/component/content/article/9-news/6278-the-national-interest--georgias-political-shake-up-enter-the-oligarch-.html, (25.02.2015).

[6] **Schofield N., Gallego M.,** Leadership or Chaos: The Heart and Soul of Politics, Springer, 2011, p. 332.

վորություն[7]: Դրանց բնորոշ է այլընտրանքային քաղաքական ուժերի առկայությունը: Վրաստանում Գամսախուրդիայի իշխանության օրոք այլընտրանքային քաղաքական ուժերի միջև մրցակցությունը գերազանցեց ընտրական մրցակցության շրջանակները: Նախկին դաշնակիցները կոշտ պայքար էին ծավալում միմյանց դեմ[8]: 1992թ. խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարան քսանչորս կուսակցություն, թեև ընտրական հաշվետվողականության ապահովումը ձախողվեց, և դրանց մեծամասնությունը նույնիսկ չմասնակցեց հաջորդ ընտրություններին: Շևարդնաձեի իշխանության օրոք ընդդիմությունը թույլ և պառակտված էր[9]: Չնայած նրան, որ մի շարք կուսակցություններ հակադրվում էին «Վրաստանի քաղաքացիների միությանը», նախկին իշխող կուսակցության ներսում ձևավորված քաղաքական ուժը՝ «Միասնական ազգային շարժումը», իրական այլընտրանք էր ընտրողների համար[10]: Վարդերի հեղափոխության արդյունքում ձևավորված կառավարության պայմաններում թույլ և մարգինալ ընդդիմությունը չէր առաջարկում արդյունավետ այլընտրանք[11]: Ժամանակավոր (անկայուն, կարճաժամկետ) քաղաքական

---

[7] **Roberts K., Wibbels E.**, Party Systems and Electoral Volatility in Latin America: A Test of Economic, Institutional, and Structural Explanations, *American Political Science Review*, 1999, 93, 575-590, http://www.jstor.org/stable/2585575 (05.01.2015); **Philip G.,** The New Populism, Presidentialism and Market-Oriented Reform in Spanish South America, *Government and Opposition*, 1998, 33(1), pp. 81-97, http://www.researchgate.net/publication/41114346_The_new_populism_presidentialism_and_market-oriented_reform_in_Spanish_South_America (11.03.2015); **Weyland K.,** Clarifying a Contested Concept: Populism in the Study of Latin American Politics, *Comparative Politics*, 2001, 34 (1), http://www.researchgate.net/publication/263535912_Clarifying_a_Contested_Concept_Populism_in_the_Study_of_Latin_America (12.01.2015).

[8] **Kuzio T.,** Post-Communist Democratic Revolutions in Comparative Perspective, *D'Anieri P., Aspects of the Orange Revolution*, Ibidem Press, 2014, p. 168.

[9] **Wooden A., Stefes Ch.,** The Politics of Transition in Central Asia and the Caucasus: Enduring Legacies and Emerging Challenges, US, Routledge, 2009, p. 115.

[10] **Wheatley J.,** Georgia from National Awakening to Rose Revolution: Delayed Transition in Former Soviet Union, Ashgate, Aldershot, 2005.

[11] **Nodia G., Scoltbach A.,** The Political Landscape of Georgia; Political Parties: Achievements, Challenges and Prospects, Eburon Uitgeverij B.V, 2006, p. 30.

խմբավորումները, որոնք Վրաստանում ձևավորվում են ընտրությունների ժամանակ հաղթելու համար, խոչընդոտում են ընտրական հաշվետվողականությանը և ներկայացուցչականությանը[12], ինչպես նաև ընթացիկ քաղաքական գործընթացների համար պատասխանատվությունը բարդում են բացառապես իշխող կուսակցության վրա[13]:

Վրաստանի դեպքում կարելի է օգտագործել «պայմանականորեն գերիշխող» եզրույթը, քանզի բոլոր երեք դեպքերում կուսակցությունների դաշինքը՝ «Կլոր սեղանը» («Ազատ Վրաստան», «Վրաստանի քաղաքացիների միություն» և «Միասնական ազգային շարժում») հետապնդում էր մեկ նպատակ՝ հաղթել ընտրություններում ձայների զգալի առավելությամբ: «Քաղաքացիների միությունը» (1995-2003) և «Միասնական ազգային շարժումն» (2004-2012) առանձնացան իշխանության հարաբերականորեն երկարատև շրջանով: Միաժամանակ իշխող կուսակցությունը կանգնած չէ քաղաքական ասպարեզից անհետանալու վտանգի առջև, մինչդեռ «Կլոր սեղան-Ազատ Վրաստան»-ը և «Քաղաքացիների միությունն» ընդմիշտ անհետացան քաղաքականությունից: Պատճառը հավանաբար այն էր, որ այդ երկու քաղաքական ուժերը ոչ թե պարտվեցին ընտրությունների արդյունքներով, այլ՝ հեղափոխության կամ հեղաշրջման հետևանքով[14]:

Զարգացող ժողովրդավարություններին բնորոշ է բարձր ընտրական անկայունությունը[15]: Վերջինս պայմանավորում է կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման և կայունության մակարդակը: Այն համակարգերում, որոնց բնորոշ է ուժեղ ընտրական անկայունությունը, կուսակցություններն ունեն թույլ ծրագրային հատկանիշներ, և քաղաքացիների համար բարդ է դրանք բացահայտել: Վրաստանում կուսակցությունների ձևավորումը ավելի շատ ծառայում է քաղաքական և տնտեսական վերնախավի շահերին, քան սոցիալական գործոններին:

---

[12] **Bader M.,** Making Parties Fit for Democracy: Georgia, Ukraine and the Challenge for Democracy Assistance, Opleidging Europese Studies, Universiteit van Amsterdam, 2007, p. 8 (18.01.2015).

[13] **Nodia, G., Scoltbach A.,** Op. cit., p. 111.

[14] **Matsaberidze M.,** Op. cit., p. 12:

[15] **Mainwaring Sc., Torcal M.,** Party System Institutionalization and Party System Theory after the Third Wave of Democratization, Handbook of Party Politics, London, Sage, 2005, pp. 204-27.

Կուսակցությունների անկայունության գլխավոր պատճառն այն է, որ կուսակցությունը գրավիչ ցատկահարթակ է հարմարվողականների համար: Տասնամյակներ շարունակ կուսակցության կայունությունը պայմանավորված էր իշխանության պահպանմամբ: Այն պահին, երբ կուսակցությունը կորցնում էր իշխանությունը, այն դադարում էր գոյություն ունենալ[16]: Կոմունիստական կուսակցությունն անհետացավ քաղաքական դաշտից այն բանից հետո, երբ Վրաստանը վերահոչակեց իր անկախությունը: Նույն ճակատագրին արժանացավ «Կլոր սեղան-Ազատ Վրաստանը» Շևարդնաձեի նախագահության օրոք, մինչդեռ նախքան այդ այն հանդիսանում էր իշխող քաղաքական ուժ: «Քաղաքացիների միությունը» և «Ագորձինեբան» (Վերածնունդ), որոնք ևս ունեին զգալի ազդեցություն և աջակցություն, անհետացան Վարդերի հեղափոխությունից հետո[17]: Այդ տեսանկյունից միակ բացառությունը «Միասնական ազգային շարժումն» է, որը միացավ ընդդիմությանը 2012թ. խորհրդարանական ընտրություններից հետո և դեռ շարունակում է քաղաքական գործունեությունը:

Որոշ փորձագետներ 2012թ. խորհրդարանական ընտրություններն անվանում էին «ընտրական հեղափոխություն», քանզի Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ ընդդիմությունը իշխանության եկավ առանց հեղափոխության, և կոմունիստների կրած պարտությունից հետո առաջին անգամ էր, որ կառավարությունը փոխվում էր սահմանադրական շրջանակներում՝ որպես ընտրությունների արդյունք: Ավելին, պատմականորեն իշխող կուսակցությունները, որպես կանոն, դառնում էին իշխանության մաս և դադարում գոյություն ունենալ ընտրություններում կրած պարտությունից հետո: 2012թ. ընտրություններից հետո նախկին իշխող կուսակցությունը դարձավ ընդդիմություն և շարունակեց քաղաքական կյանքն ու գործունեությունը, մինչդեռ «Վրացական երազանք» կոալիցիան շարունակեց ճնշող մեծամասնության կառավարման ավանդույթը: Այդ գործընթացում վճռորոշ էր Բիձինա Իվանիշվիլիի գործոնը, որի շուրջ համա-

[16] Bertelsmann Transformation Index (BTI), 2014, p. 15, http://www.bti-project.org/uploads/tx_itao_download/BTI_2014_Georgia.pdf, (13.02.2015).

[17] **Nodia G., Scoltbach A.,** Op. cit., p. 105.

խրմբվել էր գլխավոր ընդդիմադիր կոալիցիան: Իշխանության փոփոխությունը առանց նրա, հավանաբար, անհնար կլիներ:

Իհարկե, դա կարևոր նախադեպ էր Վրաստանում ժողովրդավարական քաղաքական ավանդույթներ ստեղծելու գործում: Վերոնշյալ միտումը պահպանելու և շարունակելու համար կարևոր էր ապահովել, որ 2016թ. խորհրդարանական ընտրություններն անցկացվեն ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան: Չնայած 2016թ. նախընտրական միջավայրը ստեղծեց բազմակուսակցական խորհրդարանի և կոալիցիոն կառավարության ձևավորման ակնկալիքներ, բևեռացումը կրկին սրվեց նախընտրական քարոզարշավի եզրափակիչ փուլում, ինչն ազդեց ընտրողների դիրքորոշումների վրա: Այդպիսով, բազմակուսակցական համակարգի փոխարեն այժմ նշմարվում է երկկուսակցական համակարգի ուրվագիծ, և եթե մոտ ապագայում խորհրդարանում տեղ չզբաղեցրած կուսակցությունները չնախաձեռնեն միավորված ընդդիմադիր քաղաքական կենտրոնի ստեղծման գործընթաց, ամենայն հավանականությամբ կձևավորվի երկկուսակցական համակարգ[18]:

Վրաստանում ժողովրդավարության հետագա զարգացման հիմքեր ստեղծվեցին 2016թ. հոկտեմբերի 8-ի ընտրությունների արդյունքում: Ավանդական կուսակցությունների կրած պարտությունը և ոչ լիբերալ խմբերի լիազորությունների ընդլայնումն ակտիվ քննարկումների պատճառ դարձան: Ոմանք դա բացատրում էին քաղաքական անտարբերությամբ, ոմանք՝ ոչ ժողովրդավարական միտումների խթանմամբ, մյուսները՝ քաղաքականության նկատմամբ փողի հաղթանակով[19]: Այդուհանդերձ, փաստ է, որ խորհրդարանից դուրս մնացած «որակավորում ունեցող սուբյեկտները» չկարողացան համարժեք գնահատել երկու գլխավոր կուսակցությունների ռեսուրսային հնարավորությունները և ի վիճակի չեղան համախմբել իրենց

[18] Valiarian Gorgiladze – Ivanishvili will try to form such political system, which will be able to function without him, but system will keep loyalty to him. http://www.interpressnews.ge/ge/interviu/402309-valerian-gorgiladze-ivanishvili-sheecdeba-isethi-politikuri-sistemis-sheqmnas-romelic-mis-gareshe-avtonomiurad-ifunqcionirebs-kholo-sistema-mis-mimarth-loialobas-sheinarchunebs.html, (20.10.2016).

[19] The 8 October's Lessons for Politicians and Us. Levan Tsutskiridze, 19 October, 2016, https://levantsutskiridze.com/ (21.10. 2016).

ռեսուրսները միասնական պլատֆորմում: Օրինակ, եթե Ազատ դեմոկրատները և Հանրապետականները միավորվեին մեկ բլոկում, նրանք, անկասկած, կհաղթահարեին ընտրական շեմը: Մնացած կուսակցությունները ևս ունեին համագործակցության համար անհրաժեշտ ռեսուրսներ, սակայն այդպես էլ դրանք չօգտագործվեցին:

Ազատ դեմոկրատների և Հանրապետականների ընտրական «դրամայի» գլխավոր պատճառն այդ կուսակցությունների առաջնորդների ոչ համարժեք հավակնություններն էին: Վերջիններս թույլ չէին տալիս այդ սուբյեկտներին ձևավորել միասնական պլատֆորմ: Դա իր ազդեցությունն ունեցավ ընտրությունների արդյունքների վրա:

Այդ տեսանկյունից «Վրաստանի հայրենասերների դաշինքը» չի փոխում գոյություն ունեցող իրականությունը: Այդ քաղաքական միության տեղային հաջողությունը կապված է մարգինալ միտման հետ, ինչն ունի իրավիճակային բնույթ և գալիս է հաստատելու, որ հասարակությունը հոգնել է այլ մարգինալ կուսակցություններից, ինչպիսին է, օրինակ, Աշխատավորական կուսակցությունը:

Կուսակցական համակարգում կային մի շարք արբանյակ կուսակցություններ, որոնք հանդես էին գալիս որպես ընդդիմադիր կուսակցություններ՝ չնայած հավատարիմ էին գործող ռեժիմին և արգելափակում էին կառավարության թիմի համար անցանկալի ընդդիմադիրների ցանկացած գործունեություն[20]: Նախընտրական շրջանում այդպիսի արբանյակ կուսակցությունները կենտրոնացած են ընդդիմադիր ուժերի թուլացման վրա՝ խլելով վերջիններիս քվեները[21]: Այդ ռազմավարությունը նպաստում է ընտրությունների արդյունքների նախնական կանխատեսմանը և երկարացնում է կառավարության կազմի՝ իշխանության մնալու ժամկետը[22]: Այդ իրավիճակն ամբողջ հետխորհրդային տարածքում բնորոշվում է որպես «վիրտուալ քաղաքականություն»[23]:

---

[20] **Bader M.,** Against all Odds; Aiding Political Parties in Georgia and Ukraine, Amsterdam University Press, 2010, p. 90.
[21] **Bader M.,** Op. cit., p. 98:
[22] **Bader M.,** Op. cit., p. 85:
[23] **Wilson A.,** Virtual Politics Faking Democracy in the Post-Soviet World, New Haven, Yale University Press, 2005.

Վրաստանի բազմակուսակցական համակարգին բնորոշ է իշխող կուսակցության գերակայությունը, որը հնարավորություն չունի ներկայացնելու հանրային շահերը: Կուսակցությունները ձախողեցին նաև հանրային շահերի ձևակերպման և համակարգման գործընթացը: Կուսակցական համակարգը չկարողացավ դառնալ միջնորդ հասարակության և պետության միջև: Չնայած կայունության արտաքին տպավորությանը՝ կուսակցական համակարգը չունի ներկայացուցչականություն և մրցունակություն: «Հանրային շահերի վրա հիմնված ծրագրի ներկայացումը կուսակցությունների կողմից սոսկ վարագույր է, որն օգտագործվում է համոզելու հասարակությանը, որ կուսակցությունը մտահոգվում է իրենց խնդիրներով»[24]: Գաղափարական անկարողունակությունն, իր հերթին, պայմանավորում է կուսակ-ցական համակարգի՝ անկում ապրելու և վերանալու միտումը, ինչը կմնա անփոփոխ մոտ ապագայում[25]: Վրաստանը այն բացառիկ պետություններից է, որտեղ քաղաքական գործիչը կարող է ստանալ քվեների երեք քառորդը, սակայն պաշտոնից հեռացվել կարճ ժամանակ անց[26]:

Ըստ 2016թ. խորհրդարանական ընտրությունների առաջին շրջանի արդյունքների, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը ձայների 48.62 տոկոսով զբաղեցրեց քառասունչորս տեղ համամասնական և քսաներեք տեղ՝ մեծամասնական ընտրակարգով: Մեծամասնական ընտրակարգով ընտրվող թեկնածուների համար հիսուն ընտրատարածքներում սահմանվել էր հիսուն տոկոսի շեմ: Դրա արդյունքում նշված ընտրատարածքներում ընտրությունների երկրորդ շրջանը նշանակվեց հոկտեմբերի 30-ին: Կրկնելով սահմանադրական մեծամասնության ձեռք բերման արատավոր պրակտիկան՝ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության թեկնածուները 50 ընտրատարածքներից 48-ում հաղթանակ տարան՝ պարտություն կրելով միայն

[24] **Wheatley J.,** Georgia from National Awakening to Rose Revolution: Delayed Transition in Former Soviet Union, Ashgate, Aldershot, 2005, p. 158.
[25] Bertelsmann Stiftung, BTI 2008 – Georgia Country Report, Gutersloh, Bertelsmann Stiftung, 2007, p. 2 and 10.
[26] **Jaward P.,** Elections and Treatment of the Opposition in Post-Soviet Georgia, In: Presidents, Oligarchs and Bureaucrats: Frames of Rule in the Post-Soviet Space, (ed). Stewart S., Routledge, 2012, p. 35.

երկու՝ Խաշուրի (Տոպաձե-արդյունաբերողներ) և Մթաձմինդա (անկախ թեկնածու), ընտրատարածքներում[27]: Համապատասխանաբար, իշխող քաղաքական ուժը խորհրդարանում ստացավ սահմանադրական մեծամասնություն (115 տեղ)՝ ի հաշիվ մեծամասնական ընտրակարգի: Հիմնվելով ընտրությունների եզրափակիչ փուլի արդյունքների վրա՝ սահմանադրական մեծամասնությամբ կառավարման ավանդույթը դեռ շարունակվում է: Ընտրության արդյունքները պատճառ դարձան որոշ անկայունության քաղաքական ասպարեզում (ինչպես խորհրդարանական, այնպես էլ ոչ խորհրդարանական ընդդիմության շրջանում), ինչն ազդեց քաղաքական իրավիճակի վրա: Սահմանադրական մեծամասնությամբ ընտրված իշխող կուսակցությունը չի շտապում փոփոխություններ կատարել ընտրական համակարգում: Ուստի, դեռ անհայտ է՝ ինչպիսի ընտրակարգի հիման վրա կձևավորվի խորհրդարանը 2020թ.:

Բազմակուսակցական համակարգի ձևավորման հիմնական խոչընդոտը կուսակցությունների փոխկախվածությունն է: Մասնավորապես, ընտրական համակարգի հաճախակի փոփոխությունը խոչընդոտում է քաղաքական կազմակերպությունների՝ որպես կենսունակ կազմակերպությունների, ձևավորմանը և դրանց զարգացմանը: Ընտրական համակարգի թերությունների վերաբերյալ քննարկումների ժամանակ պարբերաբար նշվում է, որ համակարգն ի վիճակի չէ ապահովել ընտրողների քաղաքական կամքի հավասար ներկայացվածություն խորհրդարանում, և, նույնիսկ ընտրողների անբավարար աջակցության դեպքում, մեծամասնության շնորհիվ ընտրական համակարգը սահմանադրական մեծամասնության ձեռքբերումը դարձնում է հնարավոր: «Այդ պայմաններում քաղաքական կազմակերպությունները «ծնվում են» արագ և նույնքան արագ «մահանում»: Այդ պատճառով այլ խնդիրներին զուգահեռ անհրաժեշտ է հասնել փոխհամաձայնության միատեսակ ընտրական համակարգի ստեղծման շուրջ, որը կգործի տևական ժամանակահատված և հնարավորություն կտա կուսակցություններին ունենալ զարգացման, իսկ ընտ-

[27] The final report of the Central Election Commission, http://cesko.ge/res/docs/20161116144542%E1%83%9D%E1%83%A5%E1%83%9B%E1%83%98.pdf, (15.11.2016).

րողներին՝ ցանկալի ռազմավարական ընտրության հնարավորություն»[28]:

Եզրակացություն

Չնայած Վրաստանում գրանցված բազմաթիվ կուսակցությունների թվին՝ 1990թ. սկսած Վրաստանի քաղաքական համակարգին մշտապես բնորոշ է եղել գերակա դիրք ունեցող իշխող կուսակցություն և պառակտված ընդդիմություն: Իր հերթին նախագահական կառավարման մոդելի գոյությունը և ընտրազանգվածի՝ նախագահի թեկնածուի նկատմամբ ունեցած առանձնահատուկ (չափազանց մեծ) վստահությունն ունեն ուղղակի ազդեցություն «գերիշխող» կուսակցական համակարգի ձևավորման վրա: Այդուհանդերձ, 2012-2013թթ. սկսած, երբ 2010թ. սահմանա-դրական փոփոխությունները լիարժեք մտան ուժի մեջ, ըստ որոնց նախագահը զրկվում էր կուսակցական պատկանելության իրավուն-քից, ընտրազանգվածի վստահության վեկտորը շեղվեց վարչապետի և ոչ պաշտոնական առաջնորդների ուղղությամբ:

Իշխող կուսակցության ուժը ևս ամրագրված է և ներկայումս պայմանավորված կուսակցական համակարգում առկա մի շարք արբանյակ կուսակցությունների գոյությամբ:

Ընդդիմությունը կարող է ձեռք բերել իշխանություն միայն ապստամբության կամ հեղափոխության ճանապարհով, և հենց որ իշխող կուսակցությունը կորցնում է իշխանությունը, այն դադարում է գոյություն ունենալ: Կոմունիստների կրած պարտությունից հետո 2012թ. խորհրդա-րանական ընտրություններում առաջին անգամ էր, որ իշխանության փոփոխությունը իրականացվում էր ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով՝ սահմանադրական

---

[28] **Tsutskiridze L.,** The Formation Problems of the Georgian Political System, April 2, 2008, https://levantsutskiridze.com/category/%E1%83%A1%E1%83%90%E1%83%A5%E1%83%90%E1%83%A0%E1%83%97%E1%83%95%E1%83%94%E1%83%9A%E1%83%9D%E1%83%A1%E1%83%9E%E1%83%9D%E1%83%9A%E1%83%98%E1%83%A2%E1%83%98%E1%83%99%E1%83%A3%E1%83%A0%E1%83%98-%E1%83%A1/ (19.10.2016).

շրջանակներում: Դրանից հետո նախկին իշխող կուսակցությունը «Միասնական ազգային շարժումը» միացավ ընդդիմությանը, մինչդեռ մեծամասնական կառավարման ավանդույթը շարունակեց «Վրացական երազանք» («Քարթուլի Օծնեբա») կոալիցիան: Վերոնշյալ միտումը պահպանելու տեսանկյունից կարևոր էին 2016թ. խորհրդարանական ընտրություն-ները: Դրանք տվեցին բազմակուսակցական խորհրդարանի և կոալիցիոն կառավարության ձևավորման հույս, չնայած նրան, որ ներկայումս բազմակուսակցական համակարգի փոխարեն նշմարվում է միայն երկկուսակցական համակարգի ուրվագիծ: Միաժամանակ ընտրություններից հետո քաղաքական ասպարեզում ծավալվող գործընթացների պատճառով երկկուսակցական համակարգի ձևավորման հավանականությունը կասկածի տակ էր, և ուշադրությունը կրկին սևեռվել էր բազմակուսակցական համակարգի ուղղությամբ:

Ընդդիմության թուլության գլխավոր պատճառն այդ կուսակցությունների առաջնորդների անզուսպ հավակնություններն էին և միմյանց ռեսուրսային կարողությունները գնահատելու անկարողությունը: Այդ ամենը նվազեցնում է միասնական պլատֆորմի ձևավորման հավանականությունը, ինչն իր հերթին ազդում է ընտրության արդյունքների վրա:

Տասնամյակներ շարունակ կուսակցության կայունությունը պայմանավորված է եղել իշխանության պահպանմամբ: Կուսակցությունների ձևավորումը, ավելի քան սոցիալական գործոնները ծառայում են քաղաքական և տնտեսական վերնախավի շահերին: Գաղափարական թուլությունը պայմանավորում է կուսակցական համակարգի հակվածությունը դեպի կուսակցությունների կազմալուծում և վերացում:

Կուսակցական համակարգի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ընտրական համակարգը, որը չի կարող ապահովել ընտրազանգվածի քաղաքական կամքի հավասարակշված ներկայացվածություն օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնում: Ընտրազանգվածի անբավարար աջակցության պայմաններում մեծամասնական համակարգի շնորհիվ հնարավոր է ստանալ սահմանադրական մեծամասնություն:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել միատեսակ ընտրական համակարգ, որը կգործի տևական ժամանակահատված և հնարավորություն կտա կուսակցություններին ունենալ զարգացման, իսկ ընտրողներին՝ ցանկալի ռազմավարական ընտրության հնարավորություն:

Multi-Party System in Georgia: Peculiarities, Challenges and Perspectives

LIA TETRADZE
Ivane Javakhishvili Tbilisi State University, Georgia

GIORGI MELIKIDZE
Ivane Javakhishvili Tbilisi State University, Georgia

The article discusses the formation of party system in Georgia, which started from the late 1980s, when the opportunity for political activities appeared during the period of the Soviet crisis. Many parties were formed at the initial stage of democratization, just like in other countries.Currently the number of registered parties in Georgia is over 230, but the number itself does not automatically indicate the existence of multiparty system. In Georgia, political parties entering Parliament, as a rule, win with great majority, which excludes the necessity for cooperation with other parties. Georgian party system is characterized by the domination of a governing party, which does not have the possibility to represent public interests. Political parties have also appeared to be incapable in view of articulating and aggregating public interests. Despite the superficial impression of stability, the party system lacks representation and competitiveness. Although 2016 pre-election environment created expectations for multiparty parliament and coalitional government formation, instead of the multiparty system we now have the two-party system contours. Moreover, if in the nearest future the parties remaining outside of parliament do not start creating a unified opposition political center, the two-party system will be formed with high probability.